

2

Կ. Ա. ԺԴԱՆՈՎ

ՀԱՅԱՔԻՄԻԱԿԱՆ  
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ  
ԱՄԵՆԱՀԱՍԱՐԱԿ  
Մ Ի Զ Ո Ց Ն Ե Ր Ը

ՊԵՏՏՐՍ

1931

ՅԵՐԵՎԱՆ

623.459

7-39

25 .04. 2013

13.249

04 AUG 2010

ԱՅ ՅԵՎ ՀՍԽՀ ՊԱՋԸ-ԱՎԻԱՔԻՄ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

3.459  
59

ՊԱՋԸ-ԱՎԻԱՔԻՄԸ ԽՍՀՄ-Ի ԽՍՀՍԸ  
ԸՅՈՒՆՑՆԵՔԻ ՈՒ ՊԸՇՏՊԸՆՈՒԹՅՈՒՆ  
ՀԵՆԱՐԱՆՆ Ե

*My*

Կ. Ա. ԺԴԱՆՈՎ

ՀԱԿԱՔԻՄԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ  
ԱՄԵՆԱՀԱՍԱՐԱԿ ՄԻՋՈՑՆԵՐԸ

[Redacted]

Թարգ. Պ. ԱԹԱՅՍՆ

ՀԽՍՀ - ՍՍՐՄ  
Ա. Ա. ՄԱՍՆԻԿՅԱՆ  
ՄԱՍՆԻԿՅԱՆ ԱՆՎԱՆ

ԽՍՀՄ-ի Գերագույն խորհուրդի նախագահության 1931

ԱՄԵՆՔԸ ՊԵՏՔ Ե ԿԱՐՈՂԱՆԱՆ ԹՈՒՆԱՎՈՐՈՂ  
ՆՅՈՒԹԵՐԻՑ ԻՐԵՆՔ ՊԱՇՏՊԱՆՎԵԼ

Խորհրդային Միության արտաքին քաղաքականու-  
թյունը նրա հենց լերևան գալու սկզբից չնդել ե խա-  
ղաղության քաղաքականություն:

Վերջին ժամանակները զինաթափման ժնևի կոն-  
ֆերանսում, 1928 թ. գարնանը, մեր ներկայացուցիչներն  
իրենց լեյութներով պարզ ապացուցեցին այդ քաղա-  
քականության վերաբերյալ մեր անկեղծությունը,  
կոնկրետ առաջարկ անելով ընդհանուր անհապաղ  
զինաթափման մասին:

Մեր առաջարկը նույնիսկ չքննվեց կոնֆերանսում,  
վորովհետև բանվորների ու գյուղացիների թշնամի-  
ները չեն ուզում զինաթափ լինել: Նրանք նույնիսկ  
մերժեցին մասնակի զինաթափման մասին մեր առա-  
ջարկի քննությունը, վորը ներկայացված ե չնդել  
ԽՍՀՄ-ի ներկայացուցիչների կողմից լիակատար զի-  
նաթափման նախագծի մերժումից հետո:

Ձինաթափման մասին միայն կեղծ Ֆրագներ ար-  
տասանելով, կապիտալիստներն իսկապես պատերազ-  
մի տենդալին պատրաստություն են տեսնում: Բան-  
վորները և գյուղացիները միլիոնները կտրված են ի-  
րենց ընտանիքներից, ոգտակար աշխատանքից. վեթ-  
խարի զրամական միջոցներ են ծախսվում զինված  
բռթեր պահելու համար. հազարավոր պիտանականներ

Հր. № 1505: Գրառեպլար № 6055 (բ) Տիրաժ 3000:  
Գետհրատի առաջին տպարան Վաղարշապատում  
Պատվեր № 1691

աշխատում են պատերազմ մղելու նոր, ավելի անդ միջոցներ գտնելու համար, և այդ բոլորի պատճառն այն է, վոր կապիտալիստական հասարակութունն առանց պատերազմի չի կարող գոյութիւն ունենալ: Պատերազմը հարստացնում է կապիտալիստների դասակարգը և լայնացնում է նրանց համար շուկաները: Իսկ աշխատավոր ժողովրդին պատերազմը սնանկութիւն է բերում:

Խորհրդային Միութիւնը, վոր հաստատ պաշտպանում է բոլոր յերկրների աշխատավորների շահերը, կապիտալիստների դասակարգի համար սարսափելի ուժ է հանդիսանում, վորը խանգարում է նրանց կողմից աշխատավորների անպատիժ շահագործումը: Թշնամիները պատրաստ են ոգտագործել ամեն մի հարմար դեպք, ԽՍՀՄ-ն պատերազմի մեջ քաշելու: Բայց մենք պատերազմ չենք ուզում, մենք բոլոր միջոցներով կկռվենք պատերազմի դեմ:

Իսկ չեթե թշնամին կցակա՞նա մեզ վրա հարձակվել, մենք պետք է նրան վճռական դիմադրութիւն ցուց տանք: Մենք թույլ չենք տալ, վոր աշխատավորները արյունով ձեռք բերած Հոկտեմբերյան նվաճումները թշնամու կողմից կործանվեն կապիտալիստների դասակարգի հաճույքի համար:

Այդպիսի դիմադրութիւն կարելի չէ ցուց տալ միայն այն դեպքում, չեթե Խորհրդային Միութիւնը հենվի վոչ միայն Կարմիր բանակի ու տորմիդի մարտական հզորութիւն վրա, այլև պատերազմի համար ամբողջ յերկրի պատրաստութիւն վրա:

Խաղաղ քաղաքականութիւն վարելով հանդերձ, առանց ընդհանուր դիմաթափման, մենք չենք կարող

մեր Կարմիր բանակը այժմ տները բաց թողնել, վորովհետև մենք չափազանց շատ թշնամիներ ունենք: Մենք մեր ուժերը պետք է ամրապնդենք, միաժամանակ ուշադրութիւն դարձնելով մեր թիկունքի վիճակի վրա:

Թիկունքին ուղղված սպառնալիքը հատկապես մեծ է, նկատի ունենալով ավիացիայի ու քիմիայի ժամանակակից ռազմական նշանակութիւնը: Ողային հակառակորդը կարող է մեր խորը թիկունքում ցած ձգել անագին քանակութեամբ պայթուցիկ ու թունավոր նյութեր:

Հակառակորդն ամենից առաջ կձգտի հարվածել թիկունքում յեղած ամենակարևոր նպատակները՝ զորքերի կենտրոնացման տեղերը, արդուհանրապետական կենտրոնները, ռազմական պահեստները, յերկաթուղային կամուրջները, կայարանները և այլն, ընդ վորում այդպիսի ողային հարձակման ժամանակ քիմիական վտանգի կենթարկվեն վոչ միայն այդ քաղաքները, յերկաթուղային կայարանների և այլն բնակչութիւնը, այլ և նրանց շրջակայքի բնակչութիւնը:

Ճակատամերձ շերտում քիմիական հաճակման նույնիսկ վերերկրյա միջոցները կարող են սպառնալ բնակչութիւնը, որինսակ՝ գաղազլանային գրոհի ժամանակ, յերթ թունավոր գազերի ամպերը շարժվում են անընդհատ ծածկոցի ձևով, բաց թողնելու տեղից 15-20 և ավելի կիլոմետրի վրա:

Հուլս դնել, թե պատերազմը հաշտարարելուն պես վտանգավոր շրջանների ամբողջ բնակչութիւնը կարող է բավարար չափով ապահովված լինել պետութիւն կողմից հակաքիմիական պաշտպանութիւն բոլոր միջոցներով, չի կարելի: Այդ պահանջներն այնքան մեծ կլինեն և այնպիսի մեծ ծախսեր կպահանջեն,

վոր վոչ մի պետութիւնն հնարավորութիւնն չի ունեւնալ այդ պահանջները բավարարել:

Այս դեպքում բնակչութեան պաշտպանութեան դուրս ծուծ մեծ ծառայութիւնն կարող են մատուցանել հակաքիմիական պաշտպանութեան ամենահասարակ միջոցները: Առանց մեծ ծախքերի, մեզանից չուրաքանչյուրը կարող ե պատրաստել այդ միջոցները առձեռն լեղած նյութերի ոգնութեամբ, և շատ դեպքերում բավական կլինեն մեր կյանքն ու մեր մերձավորների կյանքը անխուսափելի քիմիական վտանգից փրկելու համար:

Պաշտպանութեան այդ միջոցների ուսումնասիրութեան անհրաժեշտութեան վրա չենք հենց հրավիրում ընթերցողի ուշադրութիւնը:

## I. Թ. Ն.-ԻՑ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Քիմիական հարձակումից բնակչութեան պաշտպանութիւնը կարելի չե իրագործել.—1) հատուկ ապաստարանների կառուցման միջոցով, այդ ապաստարանների համար բնակելի շենքերի ու նկուղների հարմարեցման միջոցով և, առհասարակ, այնպիսի միջոցների ոգնութեամբ, վորոնք թույլ են տալիս մարդկանց ամբողջ խմբակներին միասին պաշտպանել: 2) անհատական (անձնական) պաշտպանութեան միջոցների ոգնութեամբ, վորոնք թույլ են տալիս պաշտպանվել չուրաքանչյուր մարդուն առանձին. այդ միջոցներից հիմնականը այսպես կոչված հակազազն ե, վորը կոչված ե պաշտպանել մարդու

շնչառութեան գործարաններն ու աչքերը, նրանց վրա ֆրասակար կերպով ներգործող «զազերից» (մարտական թունավորող նյութերից, կրճատ—Թ. Ն.):

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱԿԱԳԱՋԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Հակազազը պատրաստելու համար, ամենից առաջ, իհարկե, պետք ե պարզ պատկերացում ունենալ գործարանային պայմաններում պատրաստած հակազազի կազմութեան մասին:

Յուրաքանչյուր այդպիսի հակազազ բաղկացած ե հետևյալ գլխավոր մասերից. 1) հակազազային տուփից, վորը լցվում ե ածուխի հատիկներով և այլ այսպես կոչված կլանիչներով. սրանք ողը մաքրում են Թ. Ն. խառնուրդից. և 2) դեմքի դիմակ-կորդակից: Հակազազային տուփը սովորաբար պատրաստում են սպիտակ թիթեղից, վոր գործ ե ածվում կոնսերվի բանկաների, ներկերի, լաքերի բանկաների համար և այլն: Տուփը լինում ե կլոր կամ ձվաձև: Չվաձև տուփն ավելի հարմար ե կրելու համար, այդ պատճառով ել ժամանակակից հակազազը հենց այդ ձևն ե ունենում: Ծավալի տեսակետից տուփերը բազմատեսակ են լինում, 250 խորանարդ սանտիմետրից մինչև 2 լիտր (այսինքն մեկ բաժակից մինչև 8 բաժակ): Միանգամայն հասկանալի չե, վոր քանի տուփի ծավալն ավելի մեծ ե, այնքան ավելի մեծ քանակութեամբ զանազան կլանողներ կարելի չե զնտեղել նրա մեջ և հենց դրանով ել կարելի չե պաշտպանութիւնն տալ Թ. Ն ից ավելի լերկար ժամանակ:

Հակազազային տուփի վերևի և ներքևի կա-

փարիչներում կան մի-մի կլոր ծակ (տես նկ. 1): Հակազգազը հագած ժամանակ շնչառության համար անհրաժեշտ ողբ, Թ. Ն. հետ խառը, մտնում է հակազգազային տուփի մեջ ներքևի ծակի միջով: Ողբ իր ճանապարհին հանդիպելով ածուխի հատիկներին և այլ կլանիչներին, անմաս է դառնում, և Թ. Ն.-ից արդեն մաքրված մտնում է տուփի վերևի ծակի միջով դեմքի դիմակի տակ շնչառության համար:

Հակազգազային տուփը միանում է դեմքի դիմակի հետ կամ չերկար ծալքավոր ռետինե խողովակի միջոցով, կամ ուղղակի միանում է դիմակի բերանին: Ծալքավոր խողովակը գործադրվում է այն դեպքում, յերբ հակազգազային տուփը մեծ չափեր ու մեծ քաշ ունի, վորի պատճառով, դիմակին անմիջապես միացնելու ժամանակ աշխատելիս, կարող է խանգարելու խիստ սեղմել դեմքը, և բացի այդ, կարող է վտանգավոր լինել դիմակը գլխից քաշել-հանելու տեսակետից: Այդ պատճառով ավելի հարմար է տուփը կրել կողքին, կրծքին կամ միջքին հատուկ պայուսակի մեջ, իսկ տուփը դիմակի հետ միացնելու համար կիրառել ծալքավոր խողովակը:

Դիմակն ինքը, սովորաբար, պատրաստվում է կամ ամբողջովին ռետինից, կամ ռետինով խմած կտորից. իսկ չեթե այդպիսի նյութեր չկան, կարելի չե այն պատրաստել գազից անթափանց (որինակ՝ ձիթադեղով խմած) կաշվից կամ կտորից: Գոյություն ունեն չերկու տեսակի դիմակներ. 1) լրիվ դիմակ<sup>1</sup> (տ. նկ. 1) և 2) կիսադիմակ (տ. նկ. 2):


<sup>1</sup> Լրիվ դիմակը, վոր պատրաստված է բարակ կոկ ռետինից, հաճախ կոչվում է ռետինե կորուակ:

Լրիվ դիմակը հագնում են շատ հեշտ և արագ կերպով, և այդ դիմակը, կանոնավոր կերպով ոգտագործելիս, միանգամայն պահպանում է Թ. Ն. անցնելուց՝ դիմակի չերեսին կպած տեղերում: Դիմակը խորը հազցվում է գլխին և, ռետինի առաձգականության շնորհիվ, շատ լավ կպած է մնում: Դիմակի չափն ընտրում են գլխի չափի համեմատ այն հաշվով, վոր նա լավ կպած իր մեջ առնի գլուխն ու կզակը և ականջները ծածկի:


Կիսադիմակը պետք է զգուշութամբ հագնել, և մանավանդ անհրաժեշտ է մեծ քանակությամբ զանազան չափերի դիմակներից այնպիսին ընտրել, վորը ճիշտ համապատասխանում է տվյալ դեմքի չափին ու ձևվին: Կիսադիմակը գլխին ամրացնելու համար նրա չեզերքին կարում են ռետինե չերիզ շարժական ավզուկով:

Ինչպես լրիվ դիմակը, նույնպես և կիսադիմակն աչքերի դիմաց կլոր կտրած բացվածքներ ունեն, վորտեղ մետաղե շրջանակի մեջ ակնոցային ապակիներ են դրվում: Ապակիները քրտնելուց պահպանելու համար, սովորաբար, դիմակը գործածելուց առաջ, ապակիներին հատուկ պատրաստած խառնուրդ են քսում, կամ ժամանակ առ ժամանակ ապակիները սրբում են դիմակի վրա չեղած հատուկ հավելվածով, իսկ կիսադիմակի վրա՝ հատուկ կտորից կարած ծալքով (տ. նկ. 1 և 2):


Հակազգազը հագած շնչառության ժամանակ ողբ հակազգազի տակ պիտի մտնի միմիայն հակազգազային տուփի մեջ չեղած կլանիչների շերտերն անցնելուց հետո: Արտաշնչման ժամանակ ողբ դուրս է գալիս ժա-




ՀԱՎԱԳԱՐԸ ՊԱՅՈՒՍԱԿԻ ՄԵՋ



ՀԱՎԱԳԱՐԻ ՏՈՒՓԻ ԿՏՐՎԱԾԸ



ՀԱՎԱԳԱՐԻ ՏՈՒՓԻ ՏԵՄՔԸ ՆԵՐՔԵԿՒՅՑ




ՀԱՎԱԳԱՐԸ ԱՌԱՅՑ ՊԱՅՈՒՍԱԿԻ

Նկար 1. Հակագաղ ՄՄ-Ը

- 1—հորդակ—դիմակ, 2—ակնոցներ, 3—մատանման հավելված, ապակիները սրբելու համար, 4—մետաղից թափած նախափողակ, 5—արտաշնչման կախույր շՆՇանակի մեջ, 6—ծալքավոր խողովակ, 7—հակազաղային տուփ, 8—դայուսակ, 9—ցանց, 10—զսպանակ, 11—արտաշնչման կախույր—լցան, 12—ծալքեր տուփի վրա


մանակակից հակազաղերում հատուկ արտաշնչման համար նշանակված ուստինե կախույրի միջով, վոր



Նկ. 2. Անգլիական հակագաղ

- ա—Հակազաղային տուփ, Ե—բաժանմունք դիմակի համար, Բ—ծալք ակնոցները սրբելու համար

պատրաստվում է, սովորաբար, դիմակի տակին: Վորպեսզի արտաշնչվող ողն այդ դեպքում չանցնի տուփի միջով, նրա ներքևի բացվածքի մեջ կառուցում են ներշնչման կափուլը, ուստիսե թանթի ձևով, վորն ամրացվում է մետաղե, ծակեր ունեցող խցանին. ներշնչելու ժամանակ ծակերը բացվում են, իսկ արտաշնչելու ժամանակ ծածկվում են այդ ուստիսե թանթով:



Նկ. 3. Հակագաղը հագած կորդակ ակնոցները սրբելը.

Այսպիսով, լեթե հակագաղում արտաշնչման և ներշնչման կափուլները չկան, ողը դուրս գալու ժամանակ անցնում է հակագաղային տուփի միջով: Արտաշնչվող ողը, մեծ քանակությամբ ջուր և ածխածնի թու ունենալով, կլանիչների հետ շփվելիս, նրանց

փչացնում է: Բացի այդ, այդ փչացած ողի մի մասը մնում է դիմակի տակին ու տուփի մեջ, վորի պատճառով, նորից ներշնչու ժամանակ, ֆացած մասը խառնվում է ներս մտնող թարմ ողի հետ: Ստացվում է այն, վոր ամեն մի նոր ներշնչման ժամանակ ներս մտնող ողը ել ավելի չէ կեղտոտվում ֆացած ողով և վերջիվերջո այդպիսի հակագաղը հագած շունչ քաշելը դժվարանում է:

Կափուլներին առկայությունը խոշոր չափով հեշտացնում է հակագաղը հագած մնալը, վորովհետև այդպիսի կազմության ժամանակ ներշնչվող և արտաշնչվող ողը գրեթե չեն խառնվում: Բայց արտաշնչման կափուլը ուշադիր վերաբերմունք է պահանջում դեպի իրեն և, չեթե վատ է պատրաստված և վատ է պահպանվում, շատ հաճախ պատճառ է դառնում թ. ն. անմիջապես դիմակի տակ թափանցելուն:

### ԻՆՉՊԵՍ ՊԱՏՐԱՍՏԵԼ ՀԱԿԱԳԱԶԸ

#### ա) Հակագաղային տուփի պատրաստելը

Հակագաղը ձեռքի տակ լեղած նյութերից պատրաստելը ընդհանուր առմամբ դժվար չէ, բայց պետք է առաջուց ասել, վոր ինքնագործ հակագաղը պակաս հուսալի կլինի, քան այն հակագաղը, վորը պատրաստված է գործարանային պայմաններում, և վորը, որինակ, կարելի չէ ձեռք բերել Պաշր-ավիաքիմի հայթայթման բաժնի խանութներում:

Ամենից առաջ հակագաղային տուփի համար պետք է թիթեղի բանկա գտնել: Ավելի լավ է վերցնել կլոր բանկա 6—8 բաժականոց, սպիտակ թիթեղից, որի-


նակ, կոնսերվի բանկա: Յեթե ձեռքի տակ այդպիսի բանկա չլինի, կարելի չե պատրաստել չեղած բարակ յերկաթից: Բանկան պետք է լավ մաքրել ժանգից և լավ զողել: Բանկայի հատակում հատիչով կամ մի այլ գործիքով պետք է մի կլոր ծակ բանալ, մոտ 25 մ/մ տրամագծով (մոտավորապես պղնձե 2 կոպեկանոցի չափ): Ապա բացած ծակի չափի համեմատ պետք է մի փողակ գտնել, 20 մ/մ բարձրությամբ, և այդ ծակի մեջ լավ զողել: Այդ փողակը մեղ համար կծառայի իբրև բերան կորդակն ամրացնելու համար:

Իրանից հետո պետք է մի քանի փոքր կտոր թիթեղ գտնել ցանցեր պատրաստելու համար. առանց այդ ցանցերի թ. ն. կլանիչները, տուփի մեջ դնելիս, կարող են դուրս թափվել: Պետք է չերեք ցանց պատրաստել: Մեր տուփի ներքին տրամագիծը չափելով և նրան 20 մ/մ ավելացնելով, այդ չափով յերեք շրջան ենք կտրում. սրանց չեղրերը պետք է կոացնել ուղիղ անկյան տակ այնպես, վոր փոքրիկ, վոչ խորը թասի նմանութուն ստացվի, չեղրերի բարձրութունը 10 մ/մ (տ. նկ. 4):


Ապա պետք է չերկու դուշմանոց մեխ վերցնել և կտրած չուրաքանչուր թանթի վրա 150—200 փոքրիկ ծակ բանալ: Բացի ցանցերից հարկավոր կլինի նակ մեկ կլոր զսպանակ և մեկ կափարիչ մեջտեղում մի բացվածքով: Զսպանակն ավելի լավ է պատրաստել պողպատե (կամ մատրացի) լարից, 2,5-ից մինչև 3,0 մ/մ հաստությամբ: Լարը կոացնում ենք գալարի ձևով այնպես, վոր նրա փոքր շրջանն ունենա 80—100 մ/մ տրամագիծ, իսկ մեծը հավասար լինի տուփի ներքին տրամագծին:

Տուփի ներքևի կափարիչը պատրաստվում է այսպես. տուփը դնում են թիթեղի մի կտորի վրա և մե-

1465  
6319  
38



Նկ. 4. Ինքնադործ հակազգային տուփի կտրվածքը



խի սուր ծայրով գծում են տուփի չափը: Կտրելու ժամանակ այդ չափին պետք է ավելացնել 5—10 մ/մ և լեզրը կռացնել ուղիղ անկյան տակ (մեխով խազած գծով):

Ներքևի կափարիչի վրա պետք է պատրաստել նաև արտաշնչման կափուկը: Դրա համար պետք է վերցնել պղնձե 5 կոոպեկանոց և այն դնել կափարիչի մեջտեղում. դրամի շուրջը մեխի սուր ծայրով պետք է մի գիծ քաշել: Դժած շրջանի կենտրոնում պետք է մի փոքր ծակ բանալ դուրգամն ամրացնելու համար, վորը պատրաստվում է յերկու դուրգամնոց մեխից: Այս շրջանի մեջ պետք է ևս 4 մեծ ծակ բանալ ծաղկատերևների ձևով, վոր տեղավորվում են իրար դիմաց (տես նկ. 4):

Ներշնչման ժամանակ այդ մեծ ծակերի միջով ողբ կանցնի հակազազի մեջ շնչառության համար, իսկ արտաշնչման ժամանակ այդ ծակերը պետք է ծածկված լինեն: Դրա համար 5 կոոպեկանոցից մի քիչ ավելի մեծ չափով կտրում են ռետինե շրջան ու հագցնում են վերոհիշյալ դուրգամի վրա: Ծակած տեղերի մոտի բոլոր քեծերը անհրաժեշտ է մաքրել խաբոսոցով կամ նաժդակով, այլապես ռետինե թանթը լավ չի կպչիլ հատակին:

### Բ. Կլանիչներ պատրաստելը

Ժամանակակից մարտական հակազազերի տուփերը լցնելու համար գործադրվում է այսպես կոչված ակտիվացրած (գործունակ) ածուխ ու արկալյան հատիկներ: Ակտիվացրած ածուխը պատրաստվում է մեծ մասամբ վողորենու (սովորական սամավարի) ածուխից, ա-

ծուխը թրծում են հատուկ փակ թորամաններում (առանց ող ներս թողնելու) բարձր ջերմաստիճանի տաքությամբ, ժամանակ առ ժամանակ կեծ (տաք) շոգի ներս թողնելով: Այդպիսի մշակման (ակտիվացման) գլխավոր նպատակն է՝ ավելացնել ածուխի ծակոտկենությունը, վորի շնորհիվ ածուխը, նույնպես և փոքրի շատե բոլոր այն մարմինները, վորոնք մեծ ծակոտկենություն ունեն (որինակ՝ պեմզան (չեչաքարը)՝ տուֆը, մամուռը, թեյը և այլն) ընդունակ են իրենց մեջ կլանել ողի հետ խառնված թունավորող նյութերը, այդպիսի կլանիչների միջով թունավորած ողի անցնելու ժամանակ: Ածուխի հենց այդ հատկությունների վրա չի հիմնված խմելու ջեռման ջուրը չուղից և դանազան հոտերից մաքրելու չեղանակը: Հաճախ ջեռման ջուրը պատրաստվում է թուջի ամանում կամ կաթսայիկի մեջ, վորոնց մեջ դրանից առաջ վորևե մսի սոււպ են չեփել և լավ չեն լվացել: Ջրի մեջ կան չուղի շրջաններ, մսի հոտ և այլն: Դրանցից ազատվելու համար, սովորաբար, ջրի մեջ մի քանի կտոր ածուխ են դրում, ջուրը մաքրվում է և խմելու համար միանգամայն պիտանի յե դառնում, վորովհետև ամբողջ չուղն ու հոտը կլանվել են ջրի մեջ պցած ածուխի կտորներով:

Ակտիվացրած ածուխը կարող ենք պատրաստել և մենք ինքներս, ճիշտ է, մի քիչ ցածր վորակով: Դրա համար սամավարի ածուխից ընտրում են այնպիսի կտորներ, վորոնք կտորնու տեղում մախմուրի գույն ունեն: Յեթե այդպիսի նոր կտրած ածուխը լեզվի ծայրին դնենք, պարզ կերպով զգալի կլինի, վոր ածուխը ծծելով կպչում է լեզվին: Ընտրած կտորները

մւտրճի կամ փայտի ոգնությամբ փշրում են մանր հատիկների 2-ից մինչև 4 մ/մ մեծությամբ: Ածուխը մաղելով և դտելով մանրունքից ու փոշուց (որինակ՝ արդեն պատրաստած ցանցերի ոգնությամբ), պետք է քաշել 350—400 գրամ ու ածել բարակ ամանի կամ վորակե թիթեղյա բանկայի մեջ, լավ ծածկվող կափարիչով:

Կափարիչը ծածկելով, ամանն ածուխով լի պետք է դնել պրիմուսի կամ կրակարանի ուժեղ կրակի վրա 2—4 ժամվա ընթացքում: Ածուխը՝ շիկացնելուց հետո, թափում են մի ուրիշ ջրով լի ամանի մեջ և թողնում են 5—10 րոպե խառնելով: Ապա ածուխը հանում են և դարձյալ ածում են առաջին ամանի մեջ և պրիմուսի (կրակարանի) վրա նորից են շիկացնում 1½—2 ժամ: Այդ կրկնակի գործողութունը անհրաժեշտ է կատարել 3—4 անգամ: Շիկացնել պետք է զգուշությամբ, վորպեսզի առաջին՝ պրիմուսը չափից դուրս չտաքանա և չերկրորդ՝ բանկայի մեջ մնացած ածուխի փոշին չբռնկի: Պրիմուսը պետք է ժամանակ առ ժամանակ սառցնել թաց լաթով: Ամանը ծածկող կափարիչը պետք է չերբեմն քիչ բաց անել, վորպեսզի հավաքված շոգին կարողանա ազատ չելք ունենալ:

Այսպես շիկացրած ածուխը պետք է պաղեցնել, առանց բանկայից թափելու: Պաղեցման ժամանակ անհրաժեշտ է կափարիչն ամանին կպած տեղերում մնացած արանքները կավով ձեփել, վորովհետև կարևոր է, վոր պաղեցման ժամանակ բանկայի մեջ ող և թացութուն չմտնի: Յերբ ածուխը վերջնականապես պաղում է, նրբան պետք է նորից մաղել ու փոշուց դտել և սկսել հակապազային տուփի լցնելը:

#### Գ. Տուփը լցնելը

Տուփի մեջ ածուխը լցնելուց առաջ, վերցնում ենք մեր պատրաստած ցանցերից մեկը և դնում ենք նրան տուփի մեջ ույնպես, վոր տուփի վերևի կափարիչի և ցանցի միջև մոտ 10 մ/մ ազատ տարածություն մնա (տ. նկ. 4): Ցանցի չեզրը, վոր կռացրած է ուղիղ անկյան չափով, հենց թույլ է տալիս այդ արանքը պահպանելու: Ապա վերցնում ենք 20—40 գր, նայած տուփի չափերին, բամբակ (բամբակը կարելի է փոխարինել բարակ բրդով, կանեփով կամ մամուռով): Բամբակը դնում են տուփի մեջ լավ սանրելուց հետո: Վորպեսզի բամբակը տուփի պատերին լավ կպչի, ցանկալի է բամբակը լցնելուց առաջ տուփի պատերը մի քիչ լաք քսել կամ արաբական խեժ, հյուսնի սոսինձ և այլն: Բամբակը տեղավորելուց հետո պետք է դնել չերկրորդ ցանցը<sup>1</sup>:

Այդ ցանցը պիտի մի քիչ սեղմի բամբակը: Այդպիսի դրությամբ ցանցի չեզրերը պետք է զոգել տուփի պատերի հետ: Բամբակի շերտը տուփի մեջ դնում են այն նպատակով, վոր՝ 1) թույլ չտա ածուխի փոշուն անցնել մարդու թոքերի մեջ և 2) կասեցնի ծխանման թ. ն., վորոնք ամբողջովին չեն կլանվում ածուխի կողմից:

Բամբակը լցնելու ժամանակ պետք է նկատի ունենալ, վոր մեծ և պինդ սեղմած բամբակի շերտը շատ դժվարացնում է տուփի միջով շնչառութունը:

Յերկրորդ ցանցն ամրացնելուց հետո, ածուխը քիչ-քիչ

<sup>1</sup> Այդ ցանցն ավելի լավ է պատրաստել ցածր չեզրերով, վորոնք պիտի ամուր հենվեն տուփի պատերին:

քիչ լցնում ենք տուփի մեջ, տուփի պատերին թեթև խփելով և ածուխը նստեցնելով փայտե թակով: Ածուխը պետք է լցնել առնվազն 150—200 գր., գրեթե մինչև տուփի չեզոքը, տեղ թողնելով միայն չերրորդ ցանցի և զսպանակի համար: Յերրորդ, ներքևի ցանցի վրա, տուփի մեջ այն դնելուց առաջ, այն կողմին, վորը դարձված է դեպի ածուխը, պետք է դնել մի բարակ շերտ բամբակ կամ թանձիֆ, ածուխը արորվելուց և տեղահան լինելուց պահպանելու համար: Հատակը՝ զողելու ժամանակ զսպանակը պետք է սեղմել մինչև դեմ առնելը. դրա համար հարկ է լինում զողումը կատարել հատակը տուփին միքիչ սեղմած դրությամբ:

Վերջնականապես լցրած և զողած տուփը պետք է անպայման ստուգել հերմետիկության տեսակետից, այսինքն պետք է պարզել, արդյոք ողբ չի մտնում հակազազի տուփի մեջ, բացի ներքևի ծակից: Դրա համար փոքր թասի մեջ սապնաջուր են պատրաստում: Այդ ջրի մեջ թրջած վրձինով կամ լաթով թրջում են տուփի ամբողջ մակերևույթը: Ապա ներքևի ծակը ծածկելով խցանով կամ ձեռքի ափով, բերանով ողբ ուժեղ կերպով ներս են փչում վերևի ծակի միջով: Յեթե տուփը վորևե տեղում թեկուզ ամենաչնչին ծակեր ունենա, այդպիսի տեղերում կգոյանան սապնի փամփուռաներ, վորը հեշտ կարելի չեն նկատել: Այդ բոլոր տեղերը պետք է նշանակել, զողել և նորից ստուգել հերմետիկության տեսակետից: Այդ վերջացնելուց հետո, մենք կարող ենք

<sup>1</sup> Պետք է հիշել, վոր նախքան տուփի հատակը (ներշնչման կափույրի ծակերով և դուրգամով) զողելը, անհրաժեշտ է ամենից առաջ զուրգամի վրա հազցնել ռետինե կլոր թանթը:

ասել, վոր հակազազի հիմքը—հակազազային տուփը—պատրաստ է: Այդ տուփը կարող է պաշտպանել մեզ համարյա թե բոլոր հայտնի Թ. Ն. -ից սովորական դաշտային կենտրոնացման ժամանակ, որինակ՝ քլորից, ֆոսֆենից, քլորպիկրինից, իպրիտից և լուրիզիտից մեկ-յերկու ժամվա ընթացքում:

Ինչպես վերևում հիշված էր, ժամանակակից հակազազերում, բացի ածուխից, հակազազային տուփի մեջ մտցնում են ալկալային հատիկներ, վորոնք մեծ մամբ բաղկացած են մարած կրից, կիզիչ (կաուստիկ) սողայից և մարգանաթթու կալիումից: Այդ կլանիչները պատրաստելը նույնպես դժվար չեն, բայց մենք կարող ենք առանց դրանց ել յուրա գնալ, վորովհետև մարտական հակազազերի մեջ այդ կլանիչները մտցնելը նկատի չեն ունենում պաշտպանել գլխավորապես այնպիսի Թ. Ն. մեծ կենտրոնացումից, վորոնց կիրառումը կարող է, սովորաբար, տեղի ունենալ միայն ճակատային պարագայում: Խորը թիկունքում մեծ կենտրոնացում ստեղծելը շատ դժվար է, ուստի միանգամայն բավական է, յեթե մենք սահմանափակվենք միայն ածուխով:

## Դ. Հակազազի կորդակ-դիմակի յեվ այլ մանրամասնությունների կառուցումը

Բացի հակազազային տուփից, ժամանակակից հակազազերում մենք ունենք՝ կորդակ, միացնող նախափողակ արտաշնչման կափույրով և ծալքավոր խողովակ: Այդ առարկաներն ավելի լավ է պատրաստի գրենել Պաշլը-ավիաքիմի հայթայթման բաժնի խանութներ:

րում, վորովհետև դրանց պատրաստելու համար պահանջվում են այնպիսի նյութեր, վորոնք բավականին հազվագյուտ դեպքերում են պատահում տնային պիտույքների մեջ: Այդ առարկաները թանգ չեն և կանոնավոր խնամելու դեպքում կարող են ծառայել մի քանի տարի: Իսկ հակազաղային տուփը, վորը բավականին արագ է շարքից դուրս գալիս, մենք կարող ենք պատրաստել ինքներս, տուփը նորով փոխարինելով կամ հին տուփը Թ. Ն. նոր կլանիչներով լրցանելով:

Ինքնագործ կորգակ պատրաստելու համար, անհրաժեշտ և ունենալ ռետինով խխամած մի կտոր (որինակ, անջրանցիկ վերարկվի կտոր), կամ գազից անթափանց վորևե կտոր, կամ ձիթադեղով խխամած կաշի: Յնթե կորգակի կտորը շատ բարակ լինի, այդ դեպքում ավելի լավ է կտորը հաստացնել չերկուսն իրար կպցնելով:

Կորգակի կաղապարը (չաբլոնը), համաձայն նկ. 5-ի պատրաստելուց հետո, մեր կտորը կտրում ենք այդ կաղապարի համաձայն և հետո բացվածքներ ենք կրտրում ակնոցային ապակիների համար<sup>1</sup>: Ակնոցային ապակիները ցանկալի յե ունենալ կլոր տեսակը 60—80 մ/մ տրամագծով: Ակնոցային բացվածքների չեզերերը ներսի կողմից ռետինե սոսինձ քսելով, պետք է

<sup>1</sup> Նայած դեմքի չափերին ու ձևին, նկար 5-ի վրա ցույց տված կաղապարը կարելի յե փոփոխել դեպի այս կամ այն կողմը, ըստ վորում նախքան կտորի ձևելն սկսելը, պետք է կաղապարը ըստուգել, դրա համար պետք է կտրներին կպցնելու տեղերն իրար միացնել, հագնել դեմքի վրա և ըստ թերությունները նշանակել:

ապակիները դնել ու սեղմել նրանց վորևե ծանր առարկայով: Ապա նույն կտորից, վորից պատրաստված է դիմակը, պետք է չերկու ողակ կտրել: Ողակի ներսի տրամագիծը պետք է հավասար լինի դիմակի վրա կտրած բացվածքին, իսկ դրսի տրամագիծը պետք է 10—15 մ/մ ավելի մեծ լինի, քան ակնոցային ապակու տրամագիծը: Ողակները կպցնում ենք ապակիների վրալից, հետևելով, վոր ապակին ամենահուսալի կերպով կպչի դիմակին և ողակին: Սոսինձը չորանալուց հետո, կպցնում ենք դիմակի մասերը: Դիմակը կպցնելիս, նրա այն յեղրերին, վորոնք նկարի վրա նըշանակված են դժիկներով, պետք է ռետինի սոսինձ քսել, ըստ վորում դիմակի մի կեսի յեղրին սոսինձը պետք է քսել դրսի կողմից, իսկ մյուսը—ընդհակառակը՝ ներսի կողմից: Սոսինձ քսած յեղրերը պետք է մեկըմյուսի վրա դնել և մատներով հարթել մինչև ամուր կպչելը: Կպցրած տեղերն ամրացնելու համար անհրաժեշտ է ինչպես դրսի, նույնպես և ներսի կողմերից կպցնել դարձյալ մի նեղ (մոտ 15 մ/մ) շերտ նույն դիմակի կտորից:


Ապա կպցրած դիմակին պետք է կապիչներ ամրացնել: Կապիչները կարելի յե պատրաստել կամ հասարակ յերիզից, կամ ռետինե ժապավենից, վոր գործ է անվում գուլպակապի համար: Դիմակը հագնելիս հասարակ կապիչները պետք է կապել ծոծրակին, իսկ ռետինե կապիչներն ուղղակի հագցնում են գլխի վրայով: Յերկու տեսակի կապիչներն ել պետք է նախապես հարմարեցրած լինեն տվյալ անձնավորության գլխի համեմատ, ինչպես նրանց չերկարության, նույնպես և նրանց կպցնելու տեղերի տեսակետից:

Պատրաստած դիմակն իրեն բերանով հագցվում է տուփի բերանի վրա. այդ ժամանակ պետք է հետևել, վոր հագցնելու ժամանակ կտորի կպցրած տեղերը չբացվեն: Հագցրած նախափողակն ամրացվում է տուփի բերանի վրա կակուղ չերկաթալարով կամ յուղած ամուր լարանով (շպագատով):

Առաջին հաշտից թվում է, թե ամենից հեշտը արտաշնչման կափուլը պատրաստելն է. բայց պետք է հիշել, վոր այստեղ պետք է հատկապես բարեխիղճ լինել, վորովհետև կափուլի պատերը կպցնելու ժամանակ ամենափոքր անփութության հետևանքով կափուլը գործադրության համար անպետք է դառնում. կամ ներշնչման ժամանակ մեծ քանակությամբ թունալորված ող կանցնի կափուլի միջով, կամ արտաշնչման ժամանակ կափուլը մեծ դիմադրություն ցույց կտա, այսինքն նրա միջով ողը դժվարությամբ կանցնի դեպի դուրս: Կափուլը սովորաբար պատրաստում են կոկ բարակ ռետինից տոպրակի ձևով: Տոպրակի չերիք կողմը սոսինձով կպցրած են, իսկ մի կողմը կպցրած չեն: Բացի այդ, նրա կողմերից մեկի վրա մի կլոր ծակ են կտրում 12—15 մ/մ: Կափուլը կպցնում են դիմակին ակնոցային ապակիներից մի քիչ ցածր: Դիմակի և կափուլի վրայի ծակերը պետք է հավասար մեծություն ունենան և սոսինձով կպցնելու ժամանակ ճիշտ հարմադրվեն (նկ. 6): Ցանկալի չեն կափուլը դիմակին կպցնելու տեղերն ամրացնել վորևե մետադե կապով:


Յեթե վորևե պատճառով կորդակը գնել կամ պատրաստել հնարավոր չի լինի, ծալրահեղ դեպքում կարելի չէ առանց դրան ել չոլա դնալ: Այդ դեպքում

վտանգի ըրպելին պետք է աչքերը ծածկել, տուփի վերևի անցքը բերանը վերցնել, քիթը սեղմել մատներով և շունչ քաշել տուփի միջով:



Նկ. 5. Կիսադիմակի (ինքնադործ) գծանկարը (կաղապարը):

Յեթե հնարավոր է ծալքավոր խողովակ գնել, նրա մի ծայրը պետք է ամրացնել հակազդային տուփի վերևի անցքին, իսկ մյուսը՝ դիմակի բերանին կակուղ չերկաթալարով կամ կպրած բարակ թուղով: Խողովակի ու դիմակի բերանի միացման տեղից խողովակի պատերը անկումից պահպանելու համար, ան-



Նկ. 6. Արտաշնչման կախույրի դժանկարը

հրաժեշտ ե փոքրիկ (5—7 սմ չերկարությամբ) թիթեղյա փողակ պատրաստել և դնել ծալքավոր խողովակի ծայրին ներսի կողմից:

### ՀԱԿԱԳԱՁԵՐՈՎ ՈԳՏՎԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Հակազազը պահելու և տեղափոխելու հարմարության համար պետք է դնել պայուսակի մեջ, վոր պատրաստվում է տոպրակի ձևով առձեռն նյութից (բրեզենտից, պարկի (մեշոկի) կտորից և այլն): Տոպրակը պետք է ունենա քսակի կապիչ և չերիզ՝ նրան կողքին կրելու համար:

Հակազազը ամենահարմարն է կրել ձախ կողքին, փոկն անցկացնելով աջ ուսի վրայով: Փոկի չերկարությունը պետք է հարմարեցնել հասակի համեմատ:

1 Ծալքավոր խողովակ ունեցող հակազազը հազնելիս, հակազազը պայուսակից չի հանվում: Հակազազը պայուսակի մեջ կողքին կամ կրճբի վրա կրելու յեղանակը կախված է խողովակի չերկարությունից:

Տուփը դնում են պայուսակի մեջ այնպես, վոր հակազազը հազնելիս, ուտիննե կորդակի կամ դիմակի բացվածքը դարձված լինի դեպի դեմքի կողմը:

Հակազազը, այսպես կոչված «պատրաստ» դրությամբ, կրելու ժամանակ, պայուսակը պետք է բաց լինի ու տեղափոխած լինի դեպի կուրծքը: Հակազազը հազնելիս, ամենից առաջ պետք է գլխարկը գլխից վերցնել, ապա պետք է հակազազը պայուսակից հանել և գլխին հագցնել: Հազնելիս կորդակը կամ կիսադիմակը այնպես պետք է բռնել, վոր բուրձ մատերը դարձրած լինեն դեպի ներս ու դուրս, իսկ մնացած մատերը լինեն կորդակի կամ կիսադիմակի ներսում: Սկզբում պետք է կորդակի մեջ կզակը դնել, իսկ հետո զգուշաբար գլխին հագցնել կորդակի ծոծրակային մասը կամ կիսադիմակի կապիչները: Յեթե ակնոցները միանգամից չեն ընկնում աչքերի դիմաց կամ ակնոցներն ու կորդակը հուպ են տալիս, այդ դեպքում գլխարկը դնելուց առաջ պետք է զգուշությամբ ուղղել կորդակը կամ կիսադիմակը:

Հակազազը պետք է արագ հազնել 10 վայրկյանի ընթացքում: Հազնելու արագությանը կարելի չէ հասնել մշտապես մարզանքներ կատարելու միջոցով: Հակազազը հագած շնչառությունն սկզբում միքիչ դժվար է թվում, իսկ հետո 5—10 վարժությունից հետո դժվարությունն աստիճանաբար անհետանում է: Պետք է շունչ քաշել խորը, հանգիստ և, ըստ հնարավորին, քթով:

Ապակիները քրտնելու ժամանակ, նրանց պետք է սրբել, որինակ՝ ծախու կորդակներում լեղած հավելվածով: Յեթե հավելված կամ կիսադիմակում հատույ

ծալք չկա, այդ դեպքում ոգտակար ե, ապակիները քրտնեկուց խուսափելու համար, դիմակը հազնեկուց առաջ, ապակիները թքով թրջել (լիզել):

Արտաշնչման կափուլը ուժեղ սառնամանիքների ժամանակ սառչելուց պահպանելու համար, պետք է կափուլը կտրվածքների արանքը 2—3 կաթիլ գլխերին ներս թողնել և զգուշաբար մատներով տրորել:

### ՀԱԿԱԳԱԶԵՐԸ ՊԱՀԵԼՈՒ ՅԵՎ ԽՆԱՄԵԼՈՒ ԿԱՆՈՆԵՐԸ

Հակազազը գործածելուց հետո ամեն անգամ անհրաժեշտ է կորդակը զգուշաբար սրբել չոր լաթով ու չորացնել. դրա համար կորդակը պետք է շուռ տալ մյուս լերեսը դեպի վեր:

Բացի այդ, ուժեղ փչելով, հեռացվում է շուրը արտաշնչման կափուլից:

Հակազազը պետք է պահել չոր սենյակում, բայց վոչ վառարանի մոտ, վորովհետև հակազազի ուտիներ մասերը տաքությունից արագ փչանում են:

Հակազազը պետք է պահպանել զանազան հարվածներից ու հրումներից, նույնպես և նրա մեջ փոշի, կեղտ և այլն ընկնելուց:

Ամենալավն է հակազազը պաշտպանել մեջ զրած մեխից կախել սենյակի միջպատի վրա:

Պահելու ժամանակ տուփի խնչպես ներքևի, նույնպես վերևի բացվածքները պետք է ծածկած պահել, վորպեսզի ողի միջի խոնավությունը չփչացնի տուփի միջի իրերը: Այդ սովորաբար կատարվում է հետևյալ կերպ. տուփի բերանը փակվում է խցանով, իսկ ներքևի բացվածքի վրա մի կտոր թուղթ են կպցնում

(մոմաթուղթ). հակազազով ոգտվելիս, ամենից առաջ պոկում են այդ թուղթը, ապա հանում են խցանը և հազնում են հակազազը:

Շնչառության ուղիները Թ.Ն.-ից պաշտպանելու համար, վերոհիշյալ անհատական միջոցներից զատ, բացառիկ դեպքերում կարելի չե ոգտվել նույնպես սովորական թեյամանով, վորը մինչև չեզրը լցվում է ակտիվացրած ածուխով: Քիթը սեղմելով և աչքերը փակելով, թեյամանի քիթը պետք է բերանն առնել և շունչ քաշել թեյամանի միջով: Իհարկե, նրա միջով շունչ քաշելը միջիչ դժվար է, բայց ոգտակար է նրանով ոգտվել մի քանի րոպելի ընթացքում, վորպեսզի առաջին հենց հնարավորության դեպքում, այդ փոխարինել հակազազով կամ անվտանգ տեղ դուրս գալ:

Իբրև կանոն, այս կամ այն յեղանակով պատրաստած չուրաքանչուր հակազազն այնպայման պետք է ստուգել խուցի մեջ, վոր լցվում է Թ.Ն.-ով փոքր կենտրոնացումով: Ստուգումը կարող է կատարել անմիջապես հակազազը պատրաստող անձնավորությունին չքը, բայց ավելի լավ է հակազազը տալ զննելու ավիաքիմիկատի հրահանգչին:

### II. Թ.Ն.-ԻՑ ԿՈԼԵԿՏԻՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

#### ՇԵՆՔԵՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄԸ ԳԱԶԱՊԱՍՏԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Չնայած այն հանգամանքին, վոր լավ պատրաստած հակազազը հանդիսանում է իբրև ամենահարմար և ամենահուսալի միջոց Թ.Ն.-ից պաշտպանվելու հա-

մար, սակայն նրանով հաջող կերպով ոգտվել կարող են վոչ բոլորը: Որինակ, լերեխալի կամ հիվանդ թոքերով մարդու համար հակազազը կարող է անպետք լինել: Բացի այդ, ինչպես լերեում է վերոհիշյալից, հակազազը պաշտպանում է միայն շնչառության ուղիներն ու աչքերը, իսկ Թ. Ն-ի պալարական ներգործութունից մաշկը պաշտպանելու համար պահանջվում է հատուկ պաշտպանական հագուստ կամ այլ հատուկ միջոցներ, վորոնք կարող են ձեռքի տակ չլինել:

Այստեղ մեծ ծառայութուն կարող է մատուցանել մեզ նկուղը, ներքնատունը կամ մի այլ շենք, վորը հարմարեցված է այսպես կոչված գազապաստանի համար: Այս կամ այն շենքի ամենահասարակ հարմարեցումը այդպիսի ապաստարանի համար նպատակ ունի թույլ չտալ դրսի թունավորված ողի մտնելու այդ շենքի ներսը և այդպիսով նրա մեջ գտնվող մարդկանց պաշտպանել քիմիական հարձակման ժամանակ: Լավ կառուցած գազապաստանը կարող է պաշտպանել վոչ միայն բոլոր Թ. Ն-ից, այլ և պահպանել վիրավորվելուց, որինակ՝ արկերի և ռումբերի բեկորներով:

Ամենահասարակ գազապաստանով ոգտվելիս, պետք է նկատի ունենալ, վոր նրա մեջ գտնվող մարդիկ շունչ են քաշում նրա մեջ գտնվող ողի հաշվին: Ուստի, վորքան գազապաստանի մեջ ավելի շատ մարդ է գտնվում, այնքան ավելի կարճ ժամանակ նրանք կարող են այնտեղ մնալ: Հաշված է, վոր մեկ մարդու համար մեկ ժամում հարկավոր է մոտավորապես 2 խորանարդ ող: Յեթե, որինակ, մեր նկուղն ունենա մոտ 3 մետր բարձրութուն, 2,5 մ. լայնութուն և 3 մ. լերկարու-

թյուն, այսինքն նրա ծավալը լինի 22,5 խ. մ., այդ դեպքում 11 մարդ կարող են հանգիստ մնալ գազապաստանի համար հարմարեցված այդպիսի նկուղի մեջ մինչև 2 ժամ, իսկ 5 մարդը՝ մինչև 4—4,5 ժամ: Դազապաստանի մեջ ողը կեղտոտելը ծխախոտ ծխելով, նավթի մեծ լամպաներ կամ շատ մոմեր վառելով, — ամենևին չի թույլատրվում:

Նկուղի կամ ներքնատան հարմարեցումը գազապաստանի համար հատուկ դժվարութուններ չի ներկայացնում, վորովհետև այդ շենքերի պատերը լինում են խորը փորած գետնի մեջ: Անհրաժեշտ է ամբողջ ուղադրութունը կենտրոնացնել դռների և պատուհանների անցքերի վրա, առաստաղի և տանիքի վրա, այնպես վոր վոչ մի տեղ նույնիսկ ամենափոքր ծակ չմնա, վորոնց միջով կարող է անցնել թունավորած ողը գազապաստանի ներսը:

Այսպես, որինակ՝ նկուղը գազապաստանի համար հարմարեցնելու ժամանակ, նկուղի տանիքի վրա պետք է 20—30 սմ. հաստությամբ մի շերտ հող ածել: Վերևի հարկից նկուղն իջնելու մուտքը պետք է կիպ ծածկվի, վորի համար դռնակի և շրջանակի շփման տեղերը պետք է լավ ունդել ու մահուդով կամ թաղիքով պատել: Ներքնատան կամ նկուղի դռուն ահարժեշտ է կավով, կրով ծեփելուց հետո, թաղիքով պատել այնպես, վոր թաղիքի ծայրերն անցնեն դռան շրջանակի վրայով: Դռնով նկուղի ներսը Թ. Ն-ի մտնելը թույլ չտալու համար, մանավանդ գազապաստան մտնելիս ու նրանից դուրս գալիս, քիմիական հարձակման ըրպեյին, նկուղի մուտքն անհրաժեշտ է լերկարացնել, նրան միջանցքի (նախասենյակի) ձևով շինել:

Միջանցքի պատերն ու առաստաղը պետք է պատել չոր մամուռով կամ ճիմով: Դրսի մուտքի դռան վրա պետք է մահուդից կամ վերմակից վարագույր կախել: Վարագույրը Թ. Ն. ից անթափանց դարձնելու համար, նրան պետք է խխմել արևածաղկի կամ կտավատի յուղով աջնպես, վոր վարագույրի քաշը խխմելուց հետո ավելանա 2—3 անգամ:

Նկատի ունենալով, վոր դռների սովորական կառուցվածքը թույլ չի տալիս դռան անցքը կրպ փակել վարագույրով, վարագույրը դռանն ավելի լավ կպչելու ու վարագույրով ոգտվելու հարմարության համար, պետք է դռան դրսի կողմից տախտակե շրջանակ շինել՝ մի փոքր թեք դեպի դուռը. վարագույրի վրա պետք է մի քանի փայտե ձողիկ խփել, մեկը մյուսից 50 սմ վրա: Մեխերի գլուխների տակ պետք է սովարաթղթից կամ կաշվից փոքրիկ կտորներ դնել և հետո լավ յուղել: Ձողիկները խփում են վարագույրի դրսի կողմից ու իջեցնելիս նրան կրպ սեղմում են թեք շրջանակին:


Գազապաստանի անգործության ժամանակ վարագույրը գցում են գազապաստանի մուտքի վերևում հատուկ պատրաստած դարակի վրա:

Նկուղի տանիքն ու կողքի պատերը նույնպես պետք է ծածկել 25—35 սմ հաստության հողի շերտով: Նկուղի նախասնյակում անհրաժեշտ է լերկու դուլլ ունենալ, մեկը շրով լի, մյուսը դատարկ, մի կտոր սապոն ու մեկ լերեսորիչ, վորպեսզի լվացվելու հնարավորութուն լինի Թ. Ն. ու վնասվելու դեպքում:

Յնթե գազապաստանի համար տեղը հատկացված է ներքնատանը, ամենալավն է պատուհանները աղյուսով պատել և սվաղել: Իսկ լեթե ալդ վորևե պատ-

ծառով անել չի կարելի, պետք է շրջանակները խնամքով ծեփել և լավ ներկել:

Բացի այդ, անհրաժեշտ է առաջուց պատրաստել պահեստի փայտե փեղկեր պատուհանների անցքերի չափով. այդ փեղկերը պետք է կրպ մտնեն պատուհանների անցքերի մեջ և թույլ չտան Թ. Ն. ին գազապաստանի ներսը մտնելու, շրջանակների ապակիները ջարդվելու դեպքում: Հանձնարարվում է նաև կրկնակի շրջանակների միջև լեղած տարածութունը ավազով լցնել:



Նկ. 7. Գազապաստանի համար հարմարեցված նկուղի  
 1—նկուղի տանիքը ճիմով ծածկած. 2—նախասնյակ (միջանցք)  
 3—տախտակե շրջանակ, 4—վարագույր, 5—վարագույրի վրայի փայտե ձողիկներ (լավ կպչելու համար):

Ներքնատանի տան պատերն ու առաստաղը նույնպես պետք է սվաղել և սվաղի վրա չով յուղաներկով ներկել: Կարելի չե չներկել պատերի միայն աջն մասերը, վորոնք դետնի տակից դուրս չեն գալիս: Յնթե

առաստաղը չի ներկված, բոլոր ճեղքերը պետք էձե-  
փել ու ներկել: Սովորաբար շատ ճեղքեր են լինում  
պատերի պլինթերի մոտ, ուստի հանձնարարվում է  
վերջինները թաղիքով պատել: Առհասարակ բոլոր  
ճեղքերը, վորտեղ էլ լինեն նրանք, պետք է խնամ-  
քով ծեփել այս կամ այն յեղանակով (կուպրի հետ  
խառնած խժուժով, մամուռի հետ խառնած կավով,  
կրալուծուլթով և այլն):

### Ա. Գազապաստանների հովանարումը

Գազապաստանների հերմետիկացման համար բոլոր  
միջոցները ձեռք առնելով, մենք հենց ղրանով հա-  
մարյա թե վոչնչացնում ենք շենքի բնական հովա-  
հարումը. ղրա համար անհրաժեշտ է հոգ տանել, վոր  
գազապաստանի անգործության ժամանակ, հովահա-  
րել այն արհեստական կիրպով: Հակառակ պարագա-  
լում, քիմիական հարձակման ըոպելին գազապաստա-  
նի ներսի ողը կարող է այնքան կեղտոտված լինել,  
վոր նրանով ոգտվելը դժվար կլինի: Արհեստական  
հովահարումը ստեղծվում է ողի ներս հոսելու ու դուրս  
հոսելու ողանցքներ կառուցելու միջոցով: Ողանցք-  
ների բոլոր ղռնակները պետք է լավ կպած լինեն և  
այնպես պատրաստված լինեն, վոր վտանղի ըոպելին  
կարելի լինի նրանց արագ փակել և այդպիսով դա-  
ղարեցնել դրսի ողի ներս հոսելու հնարավորություն-  
նը: Շատ հարմար է սողնակների փոխարեն ոգտվել  
այն փականներով, վորոնք գործ են ածվում վառա-  
րանների խողովակներում: Փակիչն ինքը պետք է  
աեղմիչի գործողություն ունենա (որինակ՝ սեպի ձևով),  
վորպեսզի լավ կպչելն ապահովված լինի:

### Բ. Գազապաստանների ստուգումը

Շենքը գազապաստանի համար հարմարեցնելուց հե-  
տո, անհրաժեշտ է ստուգել, թե արդյոք իսկապես գա-  
ղից անթափմնց տուն է ստացվել: Ամենալավն է ստու-  
գումը կատարել գազապաստանի մուտքի մոտ վորեկ  
խիստ հոտ լեկող կամ շատ ծուխ տվող նյութ վառե-  
լով (որինակ՝ գիհի, ձիու աղը և այլն): Ստուգումը  
լով (պինակ՝ գիհի, ձիու աղը և այլն): Ստուգումը  
պետք է կատարել ամենամանապատ պայմաններում,  
պետք է կատարել ամենամանապատ պայմաններում,  
աբինակ. ա) ցանկալի լի, վոր քամի փչի պեպի գաղ-  
ապաստանի մուտքը և բ) վոր ստուգման ժամանակ  
ժարդիկ, ոգտվելով վարագուլըրով և նախասենյակով,  
մտնեն ու դուրս գան գազապաստանից: Յեթե  
ստուգման ժամանակ ապաստարանի մեջ չի ղգացվի  
վոչ ծուխը, վոչ էլ այրվող նյութերի (աղբի) հոտը,  
այդ նշանակում է տունը բավական հերմետիկ է հան-  
ալում: Բացի այդ, ստուգման համար կարելի լի  
ոգտվել վառած մոմի կամ լուցկու բոցով, վորը վոչ  
հերմետիկ տեղերում կթեքվի դեպի մի կողմը: Այդ  
վորոշվում է վառած մոմը ձեռքին ամենակասկածելի  
տեղերը (որինակ՝ պատուհանները, դռները, անկյուն-  
ները և այլն) ղրջելու միջոցով: Բոլոր հայտարերած  
վոչ հերմետիկ տեղերը պետք է խնամքով ծեփել,  
Իրա համար գազապաստանում միշտ պիտի լինի մի  
դուլ՝ շաղախած կավով կամ կրով, հայտարերած ձեղ-  
քերը ծեփելու համար:

### ԳԱԶԱՊԱՍՏԱՆՈՎ ՈՂՏՎԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Գազապաստանով ոգտվելու ժամանակ ամենից ա-  
ռաջ պետք է ուղարկություն դարձնել գազապաստա-

նի հենց մուտքի վրա: Դռները պետք է լավ ծածկած լինեն, վարագույրը պետք է իջեցրած ու լավ կպած լինի նախասենյակի շրջանակին: Մուտքի մոտ պետք է կանգնած լինի որսպահը, վորը հետևում է, վոր Թ. Ն. ներս չթափանցեն դուռը կամ վարագույրը լավ չծածկելու պատճառով: Ճեղքեր հայտարեբերուց հետո (ճեղքեր լինելու իբրև հատկանիշ հանդիսանում է գազապաստանում Թ. Ն. ի հոտ գալը), այդպիսիները պետք է անհապաղ ձեփել առաջուց պատրաստած կավի, կրի պատրաստած շողախով և այլն: Պետք է հատկապես զգուշ լինել քիմիական հալձակման րոպիլին գազապաստանը մտնելու ժամանակ, չեք ողի մեջ արդեն կան Թ. Ն. ի հետքերը: Առհասարակ քիմիական հարձակման ժամանակ պետք է թույլ տալ գազապաստանը մտնելու միայն բացառիկ դեպքերում (վիրավորների, թունավորվածների բերելը և այլն): Գազապաստանը մտնողները ամենևին չպետք է միաժամանակ բարձրացնեն նախասենյակի վարագույրը և դուռը բանա: Սկզբում պետք է, վարագույրը զուղաբար քիչ բարձրացնելով, մտնել նախասենյակը ու ապա վարագույրն իջեցնել այնպես, վոր նա լավ կպած լինի շրջանակին: Նախասենյակում պետք է հանել<sup>1</sup> Թ. Ն. վարակված վերելի հագուստը ու վտանամանները, հակառակ պարագայում այդ իրերը շարունակ կը վարակեն գազապաստանի ողջ: Հանած իրերը պետք է

<sup>1</sup> Ապաստարանում պետք է լինեն պահեստի վտանամաններ (որինակ, տրիխներ, հողաթափեր) ու վորեք հագուստ:

Յեթե սպասարանի հատակը քարե կամ հողե յե, ցանկալի յե տաքացնել այն, որինակ՝ ծղոտի, չոր խոտի բարակ շերտով և այլն:

դարսել կափերիչ ունեցող տակառի կամ արկղի մեջ. դարսելիս ամենալավն է հագուստի տրանքներում սամավարի մանր ածուխ փռել: Վերելի հագուստն ու վտանամանները հանելուց ու դարսելուց հետո, կարելի չե, դուռը քիչ բանալով, արագ ներս մտնել գազապաստանը: Գազապաստանով ոգտվելու հարմարության համար, ոգտակար է նրա մեջ ունենալ մի շարք նստարաններ նստելու համար: Մարդիկ պետք է մնան գազապաստանում այնքան ժամանակ, քանի դեռ չեն հաղորդել, թե հակառակորդը թոել հեռացել է և Թ. Ն. ի վտանգն անցել է:

Հակազաղ կամ վերոհիշյալ լեղանակով հարմարեցրած ու կահավորած ապաստարան ունենալով, մենք կարող ենք հույս ունենալ Թ. Ն. ից պաշտպանության հնարավորության վրա: Յեթե վորեք պատճառով պաշտպանական միջոցներ չկան, այդ դեպքում պետք է իր ժամանակին տեղափոխվել ավելի քիչ վտանգավոր շրջանները: Յեթե հնարավոր չե այդ նախորոք կատարել, մնացած բնակչուցուցը հակառակորդի սավառակի մոտեցման մասին հաղորդող հենց առաջին ազդանշանով պետք է հեռանա ավելի քիչ վտանգավոր տեղերը (որինակ՝ քաղաքից դուրս, մոտակա անտառը և այլն):

Յեթե հեռանալը հնարավոր չե, պետք է տանը մը, նալ, բոլոր պատուհանները, դռները, վառարանների խողովակները գոցել և, յեթե սենյակում Թ. Ն. հոտ կա, ամենից լավն է շուռնչ քաշել թաշկինակի միջով վորը պետք թրջել սողայի լուծույթով կամ լցնել մանրը ածուխով: Տանը պետք է նստել այնքան ժամանակ, մինչև վոր չհայտնեն թունավորված շրջաններից

հեռանալու հնարավորութիւններէ ու ճանապարհներէ մասին 1.

ՎԱՐԱԿՎԱԾ ՎՍՅՐԻ Թ. Ն. ԻՑ ՄԱՔՐԵԼՈՒ (ԱՊՍԳԱ-  
ՉԱՅՄԱՆ) ԿԱՆՈՆՆԵՐԸ

Հակառակորդը թիկունքներէ վրա կտրող և քիմիա-  
կան հարձակում կատարել կամ ողաքիմիական ուժ-  
բեր ցած նետելու միջոցով կամ սավառակներէ Թ. Ն. փոշիացնելու միջոցով կարելի լի լինթադրել, վոր  
լերկու դեպքումն ել թունավորող նյութերը կկիրառ-  
վեն մեծ մասամբ միայն կալուն նյութերը, այսինքն  
այնպիսիները, վորոնք, դետին նետելուց հետո՝ դո-  
լորշիանում են (ցնդում են) միջանի որվա, նուրիսկ  
միջանի շաբաթվա ընթացքում և այդ բոլոր ժամա-  
նակ վայրի վարակված տեղամասը վտանգավոր կդարձ-  
նեն: Բացի այդ, քամին դոլորշիացող Թ. Ն. մի կող-  
մը տանելով, թունավորման վտանգի կենթարկի ել  
ավելի լայն տարածութիւններ: Վերոհիշյալ վտանգը  
վոչնչացնելու համար, պետք է քիմիական հարձակու-  
մից անմիջապես հետո մաքրել Թ. Ն. վարակված բո-  
լոր տեղերը: Նկատի ունենալով, վոր իպրիտի տիպա-  
րի կալուն Թ. Ն. ներգործում են վոչ միայն շնչառու-  
թյան ուղիներէ վրա, այլև մարդու մաշկի վրա, թա-  
փանցելով սովորական գործվածքի և վտանամանի

1 Գործը և պատահել, վոր պատուհաններէ ազակիները կփչը-  
վեն մոտերքում պայթած բուժքի բեկորներով կամ միայն  
աւարի պայթումից առաջացած օդի ջնցումից: Եւտի, յեթե նա-  
բավոր է, ավելի լավ է պատուհանները ծածկել փեղկերով, վո-  
րոնք պիտի լավ կզած լինեն պատուհաններէ շրջանակներէ:

միջով, այդպիսի Թ. Ն. վարակված տեղամասերը մաք-  
րելու համար պետք է հատկապես զգուշ լինել, վո-  
րովհետև նուրիսկ իպրիտի ամենամանրան հետքերը  
մաշկի վրա անմիջապես ընկնելով՝ կաթիլներէ ձևով  
կամ վարակված իրերի հետ շփվելու ժամանակ, կա-  
րող են մարմնի վրա առաջացնել այնպիսի վերքեր,  
վորոնք յերկար բժշկութիւնն կպահանջեն: Ապագա-  
զայցման աշխատանքները, իբրև կանոն, պետք է կա-  
տարեն Պաշտ-ավիաքիմի հատուկ ապագազայցող խում-  
բերը կամ հատուկ զորական խմբերը, լեթե, ինարկե,  
այդ ժամանակ քաղաքում կամ գյուղում զորամասեր  
կլինեն: Սակայն ապագազայցման աշխատանքներէ հա-  
մար պետք է ներգրավել նաև տեղական բնակչու-  
թիւնը, լերբ, որինակ, վարակված տեղամասը շատ  
մեծ կլինի և շատ աշխատավոր ձեռք կպահանջի:

Ապագազայցման աօխասանքներ սովորաբար կա-  
տարվում են հասուկ հագուստ հագած, վորը պաշտպա-  
նում է մաշկը Թ. Ն. պալարական ներգործութիւնից:  
Այդպիսի հագուստը կարում են քաթանի կամ բամ-  
բակի կտորից և ձիթադեղով խիմոււմ: Նկատի ունե-  
նալով, վոր կաշի վտանամանները նուրիսկս չեն ուշա-  
պանում վոտները, աշխատանքներէ ժամանակ ան-  
հրաժեշտ է վոտներին հազած ունենալ ուտինե ճաշա-  
վոր կոշիկներ կամ կրկնակոշիկներ, իսկ ձեռքերին  
հազնել ուտինե ձեռնոցներ: Յեթե ձեռքի տակ ուս ի-  
նե կոշիկներ չլինեն, կարելի լի ոգտագործել սովորա-  
կան կոշիկները, փաթաթելով նրանց լավ լուղած  
տոպրակով կամ լաթերով այդ վորոշ չափով վոտնե-  
րը վարակումից կպաշտպանի:

Յերբեմն պահանջ կլինի շտապ լանցնել վարակված

տեղամասով նրա ապագազացումից առաջ, առանց վորեւ պաշտպանական միջոցներու Այդպիսի դեպքերում հանձնարարվում է վարակված տեղամասի վրայով մի նեղ շերտ գցել տախտակներից, վահաններից, ջախից և այլն: Այդ անցքով պետք է արագ անցնել առանց վարակված գետնին դիպչելու:

Ապագազացման աշխատանքներն սկսելուց առաջ, անհրաժեշտ է վարակված տեղամասերի սահմանները նշանակել ու աչքի ընկնող տեղերում պայմանական դրոշակներ տնկել կամ համապատասխան մակագրեր գրել: վորպեսզի ամբողջ բնակչութունն իմանա, վոր ցույց տված սահմանից հետո գնալը վտանգավոր է:

Ամենից ոգտակարն է վարակման լենթարկված տեղամասը լերկաթալարերով պատել կամ ձողերով ցանկապատել<sup>1</sup>:

Վարակված տեղամասերի սահմանները վորոշվում են կամ հոտով, կամ գետնի վրայի չուղոտ բիծերով, կամ հատուկ անթիւների—«գաղորդիչների» ոգնութլամբ:

Ապագազացման ժամանակ կաշուն թ. Ն. (որինակ իպրիտով, լյուրիդիտով և այլն) վարակված տեղամասի վրա պետք է սրսկել կամ ցանել հատուկ քիմիական բաղադրութլուններ, վորոնք թ. Ն. անվնաս են դարձնում: Այսպես, որինակ, լեթե տեղամասը վարակված լինի իպրիտով, նրան անվնաս դարձնելու համար պետք է տեղամասի վրա ցանել փոշիանման քլորալիթր (մոտ 200—800 գրամ վարակված մակերեսի 1 քառակ. մետրի համար): Գլորակիթրը պետք է ցանել

<sup>1</sup> Գիշեր ժամանակ վարակված տեղամասի սահմանները նշանակելու համար, անհրաժեշտ է ազդանշանի դրոշակներ և մակագրերի մոտ վառած լապտերներ կախել:

հավասարաչափ խավի ձեով սովորական կամ հատուկ քամիչներով կամ սովորական թիչերով: Ապագազացումից հետո, շարժումը ապագազացման լենթարկված ճանապարհով պետք է վերսկսել միայն վորոշ ժամանակից հետո (մոտ 1 ժամից հետո):

Ապագազացման աշխատանքները հանձնարարվում է կատարել, լեթե պարագան թուլ է տալիս, արեզակը ծագելուց առաջ կամ իրիկնապահին, վորովհետև տաք ժամերին թ. Ն. ամենից շատ են գոլորշիանում. ուստի ապագազացման աշխատանքներն այդպիսի պայմաններում կապված են մեծ վտանգի հետ:

Յեթե հարկ է լինում ապագազացնել խոտով կամ մանր թփուտով ծածկված տեղամասը, այդ դեպքում ամենից լավն է գործադրել կրակալին մեթոդը, վորը կայանում է նրանում, վոր վարակված տեղամասի վրա սպիտակ կամ սև նավթ են ցանում և ապա վառում: Սպիտակ կամ սև նավթի փոխարեն կարելի լե ոգտվել չոր ջախով, ծղոտով, վորը պետք է հավասարաչափ շաղ տալ վարակված տեղամասի վրա և նավթ ցանելով, վառել: Այդ դեպքում, իհարկե, բոլոր միջոցները պետք է ձեռք առնել մոտակա շենքերը հրդեհի վտանգից պաշտպանելու համար, և բացի այդ, այնպիսի ժամանակ ընտրել, վոր քամին չփչի դեպի մոտակա մարդարնակ շենքերը այլապես, բացի հրդեհի վտանգից, նրանց կսպառնա նաև թ. Ն. թունավորվելու հատուկ վտանգը:

Վորոշ դեպքերում կարելի լե գործադրել և, բավականին հաճախ, թ. Ն.-ից մաքրելու մեխանիքական միջոցները, որինակ, թ. Ն. ջրով վողողելը հրդեհաշեջ խողովակի ոգնութլամբ, կամ գետնի (կամ ձյան) վորեի վարակված շերտի հեռացումը նրան փորելու մլ-


չոցով, կամ վերջնական վարակված իրը գետնի մեջ  
թաղելով:

Վարակված վայրում լիզած ժամանակ պետք է.  
ա) անպաշտպան ձեռքերով վոչ մի բանի ձեռք չտալ,  
բ) ողառումբերի բեկորները չհավաքել, այլ նույն տե-  
ղում գետնի տակ թաղել, գ) առանց կարիքի ձեռքով  
չդիպչել մարմնին, մանավանդ աչքերին, և չքորել,  
դ) գետնի վրա չնստել և չպառկել, թեկուզ և պաշտ-  
պանական հագուստը հագած, և) պլթած ուումբերի  
ձագարներով չոգտվել ծածկարանների համար և այլն,  
զ) վարակված վայրում բնական կարիքները չհոգալ  
(դուրս չգնալ):

Վարակված տեղամասից դուրս գալուց հետո, յեթե  
հնարավոր է, պետք է կոշիկ տակերը սրբել քլորա-  
կրով կամ ուղղակի հողով, ձեռքերը լվանալ և հնա-  
կրով կամ ուղղակի հողում լողանար չատկապես պետք է  
խնամքով լվանալ մարմնի այն տեղերը, վորոնք ա-  
մենից շատ են զգայուն պալարական թ. ն. վիրավո-  
րելու նկատմամբ (սեռական գործարանները, կոնս-  
տակերը և անհասարակ այն տեղերը, վորտեղ մարմինն  
ամենից հաճախ է քրտնում):

### III. ԱՌՍՁԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆԸ Թ. Ն. - ԻՑ ՎՆԱՍԼԱՍ- ՆԵՐԻՆ

Խեղդիչ ներգործություն ունեցող թ. ն. - ով վնաս-  
վելու ժամանակ, այսինքն այնպիսիներով, վորոնք  
ամենից առաջ ներգործում են մեր թոքերի վրա, ա-  
ռաջացնում են հազ, հեղձանք և այլն, առաջին հեր-  
թին պետք է վնասվածին դուրս հանել վարակված տեղա-



Նկար 8. Վաշտպանակով հագուստ.

մասից դեպի թարմ ողբ. ընդ վորում, յեթե վնաս-  
վածն առանց հակագողի չե լեղել, անհրաժեշտ ե նրան  
հակագազ հագցնել: Վարակված տեղամասը պետք ե  
անցնել, վորքան հնարավոր ե, արագ. դրա համար  
պետք ե միշտ հաշվի առնել, թե ուր ե փչում քամին,  
և վարակված տեղամասերի շուրջն անցնել քամու  
փչելու կողմից: Հիվանդին դուրս հանելուց հետո, նրա  
վրայից պետք ե հանել վերևի հագուստը (նրանց մեջ  
Թ. Ն. ի մնալը նկատի ունենալով), գոտին ու շապկի  
ոճիքի կոճակները բաց անել և այլն: Հիվանդին տաք  
փաթաթելուց հետո, պետք ե նրան միանգամայն հան-  
գիստ թողնել. ոգտակար ե նույնպես հիվանդին տալ  
խմելու մեկ բաժակ թուռդ սուրճ կամ թեյ: Յեթե հի-  
վանդի վոտերն ու ձեռքերը պաղում են, պետք ե  
վոտերին ու ձեռքերին տաք ջրով շշեր դնել:

Արտասովաբեր ներգործություն ունեցող Թ. Ն. վնաս-  
վելու դեպքում, այսինքն չերբ վնասվածները զգում են  
աչքերի ծակոց, և ուժեղ արցունքածորանք ե առա-  
ջանում, հանձնարարվում ե աչքերը զգուշաբար լվա-  
նալ բամբակի կտորով, վորը պիտի թրջել 2% սո-  
դայի լուծույթով (այսինքն 1 թեյի գդալ սոդա մեկ  
բաժակ ջրին):

Հեղուկ իպրիտով վնասվելու դեպքում, անհրաժեշտ  
ե բոլոր հագուստն ու վոտնամանները հանել, աչքով  
տեսանելի իպրիտի կաթիլները հեռացնել, կաթիլն  
ամենևին չտարածել, այլ վերցնել բամբակով, և վնաս-  
ված տեղերը լվանալ սպիտակ նավթով և ապա տաք  
ջրով ու սապոնով կամ քլորակրի բարակ շերտ ցանել  
(բայց վոչ մաշկի նուրբ տեղերը): 2—3 րոպեից հե-  
տո քլորակիրը պետք ե լվանալ տաք ջրով: Այդ բոլոր

ըր պետք ե կատարել Թ. Ն. վնասվելուց, վորքան  
հնարավոր ե, անմիջապես հետո, ընդ վորում պետք ե  
հիշել, վոր հիվանդի մաշկի վնասված տեղերին չպետք ե  
դիպչել անպաշտպան ձեռքերով, վորպեսզի ինքը չվա-  
րակվի: Համենայն դեպս, ոգնություն հասցնելուց հե-  
տո, ոգնություն հասցնող անձնավորությունը ձեռքե-  
րը պետք ե լավ լվանա տաք ջրով ու սապոնով: Հի-  
վանդին պետք ե այնպես լվանալ, վոր լվանալու ժա-  
մանակ ջուրը շարունակ հոսի: Կարմրած վնասված  
տեղերի վրա, լվանալուց հետո, պետք ե ցանել տալիկ  
կամ քսերոֆորմ և կապել: Աչքերը, քիթը, բերանը ու  
կոկորդը հանձնարարվում ե լվանալ սոդայի լու-  
ծույթով (1 թեյի գթալ սոդա մեկ բաժակ ջրի համար)  
Թ. Ն. վարակված կերակրով կամ ջրով թունավոր  
վելու դեպքում (զգացվում ե ուժեղ ցավ սրտի գդալի  
տակին, սրտի խառնում, փսխում), հիվանդին պետք  
ե տալ, վոր 1—2 բաժակ ջուր լսմի սոդայով, և վեր-  
սում առաջացնել (մատնեբը բերանը կոխելու միջո-  
ցով):

Իպրիտով թունավորվելու հատկանիշները կարող  
են լերևալ վոչ միանգամից, այլ թունավորվելուց  
6—24 ժամ անցնելուց հետո: Սկզբում մաշկի վրա կար-  
մրություն ե լերևում, ապա հեղուկով լի բշտիկներ  
են գոյանում, ինչպես սովորական այրվածքի ժամա-  
նակ: Յեթե բշտիկները պատռել և կեղտոտել, նրանք  
սկսում են թարախակալել և լերկար ժամանակ չա-  
ռողջացող վերքերի տեսք են ստանում:

Յեթե հնարավորություն ե լինում հիվանդին լվա-  
նալ իպրիտով վնասվելուց հետո առաջին 5—10 րո-  
պեի ընթացքում, այդ դեպքում վնասվածն արագ ա-  
ռողջանում ե մի քանի օրվա ընթացքում:

Հետագա բժշկությունը պետք է ընթանա բժշկի  
ցուցումներին համաձայն:


### IV. Թ. Ն.-ի ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՆԴՐԱՆԻՆԵՐԻ ՎՐԱ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Թունավորող նյութերը մեծ մասամբ կենդանիների  
վրա նույն ներգործությունն են ունենում, ինչ վոր  
մարդու վրա:


Թունավորող նյութերի ներգործությանը առաջին  
հերթին լենթարկվում են կենդանիների շնչառու-  
թյան գործարանները, իսկ իպրիտով վարակ-  
ված տեղամասերով անցնելու ժամանակ կենդանի-  
ների վրտերն են վնասվում: Ձիերի վրտերը հատկա-  
պես զգայուն են այն տեղում, վորտեղ սմբակը կըս-  
չում է կաշուն: Նույնպես հաճախ սմբակի սլաքի բոր-  
բոքում է տեղի ունենում:

Կենդանիների շնչառության գործարանները պաշտ-  
պանելու համար գոյություն ունեն հատուկ հակազա-  
զեր, որինակ՝ ձիերի հակազազեր, հակազազեր շների  
համար և այլն: Ձիու հակազազը սովորական խարա-  
պարկի ձև ունի, քիմիական լուծույթներով խլամած:  
Այդպիսի խարապարկը, ավզուկներին և փոկերի ոգնու-  
թյամբ, կիպ ընդգրկում է ձիու դնչի ներքևի մասը  
(տ. նկ. 9): Այդքերն անպաշտպան են մնում, վորով-  
հետև նրանք շատ քիչ են զգայուն թունավորող նյու-  
թերի նկատմամբ:

Հատուկ ձիու հակազազ չունենալու դեպքում, կա-  
րելի է ոգտվել նաև ձիու խարապարկով: Պրա համար  
խարապարկի հատակին չոր խոտ են դնում, հակազա-



Նկ. 9. Ձիու հակազազ:



Նկ. 10. Հակազազ շների համար:

զախն լուծուլթով խիմած, վորը բաղկացած է սո-  
դախից, գլխերիինից, ուրուտրոպինից և ջրից, իսկ ծալ-  
րահեղ դեպքում միայն ջրով խիմած: Այդ խտը պետք  
է կպչի ձիու դնչին ամեն կողմից, մանավանդ քթա-  
ծակերի կողմից: Վորպեսզի ձին խտը չուտի, նրան  
սկզբից դնչակալ են հազցնում, վորը նոսր կտորից  
կարած տոպրակի ձև ունի:

Ձիու վտտները թ. Ն. պալարական ներգործութիւ-  
նից պաշտպանելու համար, իմպերիալիստական պա-  
տերազմի ժամանակ ոտարերկրյա բանակներում գո-  
լութիւն ունեւին հատուկ կողիկներ, վորոնք կարած  
էին թ. Ն. ից տնթափանց նյութից. կողիկները ծած-  
կում էին վտտերը մինչև ծնկները: Բայց ձիերի հա-  
մար պաշտպանության այդպիսի բարդ միջոցները  
դժվար եր միշտ ունենալ: Հատուկ պաշտպանական  
միջոցներ չունենալու դեպքում, ձիերը (և առհասարակ  
կենդանիները) իր ժամանակին պետք է քշէ  
դաշտը, անտառը, գետի մոտ և այլն: Անասուններն  
արածացնողները պետք է հետևեն, վոր հոտը չարա-  
ծի կիրճերում, ցածր տեղերում, վորտեղ թ. Ն. ի  
կանգառում է գոյանում: Բացի այդ, չպետք է ամե-  
նէին թուլ տալ անասունները քշելու վարակված  
տեղամասերով: Վարակված անասունները պետք է  
հոտից առանձնացնել և վորքան հնարավոր է շուտ  
վանալ տաք ջրով ու սապոնով թ. Ն. ից ամենազգա-  
յուն տեղերը (կործը, սեռական գործարանները) վո-  
տերի): Անասունների վնասումը պետք է զգուշարար  
չընկնեն վնասողի մաշկի վրա: Ամենալավն է այդ կա-  
տարել հակազգը հագած, սեռինն ձեռնոցները կամ

ձիթադեղով խիմած թաթպանները հազած և մոմլա-  
թից պատրաստած գոգնոց կապած (լեթե ձեռքի տակ  
ձեռնոցներ չկան, այդ դեպքում չպետք է լաթը բռնել  
անպաշտպան ձեռքերով, այլ փաթաթել այն փայտի  
վրա):

V. ՍՆՈՒՆԴԻ ՄԹԵՐՔՆԵՐԻ, ԿԱՇՈՒՅՔԻ ՅԵՎ. ՏՆԱՅԻՆ  
ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ ԱՅԼ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒՄԸ  
Թ. Ն. ի-Յ

Կահուլքը թ. Ն. ի ներգործութիւնից պաշտպանե-  
լու համար, ամենալավն է մեծարժեքավոր կահուլքը  
դնել փայ գետեղարաններում կամ նրան ծածկել բրե-  
զնտով կամ վորտե այլ ծածկոցով: Յեթե այս միջոց-  
ներից վոչ մեկը չի գործադրված, այդ դեպքում թ. Ն.  
վարակման ամենաչնչին նշաններ յերևալու դեպքում  
(հոտ, լուղոտ բիծեր և կաթիլներ), անհրաժեշտ է,  
վերոհիշյալ նախազգուշական միջոցները ձեռք առնե-  
լուց հետո, կահուլքը վանալ: Մետաղե առարկաները  
պետք է վանալ սպիտակ նավթով, արևածաղկի յու-  
ղով կամ ալկալալին ջրով, ապա սրբել չորացնել լա-  
թերով, լավ լուղել և մի քանի օրով դնել արևային  
քամաչարվող տեղում: Փայտե առարկաները (կահկա-  
րասիք, շինանյութերը, փայտե շենքերի պատերը և  
այլն) իպրիտի տիպարի թ. Ն. ից ապագազացման  
համար մեծ դժվարութիւններ են ներկայացնում: Սո-  
վորաբար, փայտե մասերին մի քանի անգամ (մինչև  
հոտի վոչնչանալը) նոր պատրաստած շաղախ են քսում,  
վոր բաղկացած է մեկ քաշի մաս քլորակրից և չերեք  
քաշի մաս ջրից: Ապա այդպիսի տեղերը պետք է

վանալ ջրով (սողա խառնած) և, լեթե կտրելի լինելով քամահարվող տեղում:

Բացի անասունների և կահույքի պաշտպանությունից, գյուղացուն անհրաժեշտ է մտածել հացի ամբարների, խոտի, ծղոտի դեղերի և այլի հակաքիմիական պաշտպանության մասին: Յեթե հացը ամբարներում թափած լինի արկղների կամ պարկերի մեջ, այդ դեպքում Թ. Ն. ի ներգործությունից նրա պաշտպանությունը հատուկ դժվարություններ չի ներկայացնում: Ամենից առաջ պետք է ձեռքով ամբարի բոլոր պատահաններն ու դռները: Պատերը պետք է նախապես լավ գոցել խժուժով ալնպես, վոր վոչ մի տեղ նույնիսկ ամենաչնչին ձեղք չմնա: Տանիքը պետք է սվաղել կրով կամ կավով և հողի չոր տերևների կամ մամուռի մի բարակ շերտով ծածկել:

Յեթե հացը դարսած է լեղել բաց ողում, ամենից լավն է կույտեր հավաքել, կույտերը ծածկել բրեզնտով, պարկերով, խտրներով և վերևից ծածկել մի շերտ ծղոտով և այլն: Հակաակորդի հարձակումը վերջանալուց հետո, հացի, խարի բոլոր պահեստները պետք է ուղարկված լինելով զննել: Յեթե հացի Թ. Ն.-ով վարակման մասին կասկած լինի, ամենից առաջ անհրաժեշտ է զգուշությամբ վերցնել և վոչնչացնել թե հենց ծածկոցները և թե հացահատիկի վերևի (հոտ յեկող) շերտը, այսինքն գետնի տակ թաղել կամ այլ բեր: Այրելու ժամանակ անհրաժեշտ է հիշել, վոր խարուկի ծուխը կարող է Թ. Ն. ի հետքեր ունենալ ուստի անհրաժեշտ է հետևել, վոր ծուխը չգնա մարդարնակ շինությունների ուղղությամբ: Մնացած հացահատիկը կամ խարը պետք է 7-10 սր պահել քա-

մահարվող տեղում արեալին կողմում: Ամենից լավն է հացահատիկը փռել գետնի վրա քարակ շերտով և ժամանակ առ ժամանակ խառնել փոցիով կամ թիով: Իպրիտի տիպարի Թ. Ն.-ի վարակման լեթարկված հացը, նույնիսկ ամենամեծ ուղարկությամբ մաքրելուց հետո, չպետք է ուտելու համար վերցնել:

Այդպիսի հացահատիկը պետք է գործադրել սերմացուի համար:

Թունավորված անասունները, տնային թռչունները և առհասարակ ուտեստի մթերքները, վոր լեթարկվել են Թ. Ն.-ի ներգործությամբ, առանց բժշկի թուլությունների չի կարելի կերակրի համար գործադրել, այլապես այդ կարող է առաջ բերել ամբողջ որդանիզմի շատ լուրջ հիվանդություններ:

Հացը և արմատապտուղները, վորոնք քիմիական հարձակման ընդունելի արմատի վրա լինելով, դաշտից բերելուց հետո (իսկ հունձը պետք է անել, ըստ հնարավորին, քիմիական հարձակումից առնվազն 3-4 արաթ հետո), պետք է մյուս հացից և արմատապտուղներից առանձին դարսել և ոգտագործել, ըստ հնարավորին, միայն սերմացուի համար:

Հաճախ դժվար է լինում վորոշել, թե դաշտի վոր մասն է լեթարկվել Թ. Ն.-ի վարակմանը: Այնպիսի Թ. Ն., ինչպես որինակ՝ ջրը, Ֆոսգենը, ամեն մի բուսականության վրա ներգործելիս, շատ փոխում է նրա գունավորումը, այսինքն նորմալ կանաչ գույնի փոխարեն, դաշտը, որինակ, կեղտոտ դեղին գույն է օտանում, հիշեցնելով լեթարտից այրված դաշտ: Մյուս Թ. Ն. ներգործում են ավելի քիչ նկատելի կերպով, իսկ իպրիտը համարյա թե չի փոփոխում բուսական-

նութիան գունավորումը, սակայն բավականին մեծ կործանիչ ներգործություն է ունենում, այսպես, որին նակ՝ մի առ ժամանակից հետո տերևներն սկսում են թափվել, ծառը չորանում է, թեպետ ծառի կենսունակությունն ելի մնում է:

Ջրի (լճակի, ջրհորի) մեջ ընկած Թ. Ն. մեծ մասամբ լուծվում են ջրի մեջ, Վորոշ Թ. Ն. ջրի լեռնան ժամանակ գոլորշիանում, անհետանում են, բայց, իբրև կանոն, վարակված ավազանների ջրով ոգտվելը կերակուր պատրաստելու, խմելու, լվացվելու և լվացքի համար չի թույլատրվում:

Թ. Ն. ի ներգործության տակ ընկած հագուստն ու սպիտակեղենը պետք է լավ լեռացնել ջրի մեջ (առնվազն 1 ժամ), ապա վողոզել հոսող ջրի մեջ և բաց ողում փռել չորանալու համար: Յեռացնելու ժամանակ ոգտակար է մի քիչ սողա և կանաչ սապոն ավելացնել:

Վարակված կաշվե վոտնամանը ապագազացման գրեթե չի լինթարկվում: Ամենալավն է վարակված վոտնամանը թրջել սպիտակ նավթով, բենզինով, թողնել, վոր նավթն ու բենզինը կաշուց գոլորշիանան և հետո վոտնամանը լուղել ճարպով, այլապես վոտնամանը չափազանց փխրուն է դառնում և հետագայում ոգտվելու համար անպետքանում է:

## VI. ՀԱԿԱՔԻՄԻԱԿԱՆ ՊՍՇՏՊԱՆՈՒՅՄՆ ԿԱԶՍԱԿԵՐՊՈՒՅՅԱՆ ԿԱՐԳԸ ՏԵՂԵՐՈՒՄ

Հակաքիմիական պաշտպանության այս կամ այն միջոցների առկաությունը դեռ լիովին չի ապահովում բնակչությունը Թ. Ն.-ից վնասվելուց, լեթե այդ

միջոցները գործադրվեն անկարգ կերպով և առանց վորոշ սխտեմի:

Այդ պատճառով պաշտպանության բոլոր միջոցները ամենալավ ուղտագործման համար՝ ինչպես ռազմական հրամանատարության կողմից, նույնպես և հասարակական կազմակերպությունների կողմից, վորոշ կարգ և սահմանվում, վորը պարտավորեցնում է Սորհրդային Միության բոլոր քաղաքացիներին այդ կարգը խտիվ պահպանել:

Այդպիսի հասարակական կազմակերպությունը, ինչպես, որինակ, «Պաշտպանության կազմակերպություն», հանձնիս իրա աթիկունքի ողաքիմիական պաշտպանության գործում:

Դեռ լաղաղ պարագայի պայմաններում ավիաքիմ ջրկատները կպարտավորվեն տեղերում հետևյալ աշխատանքը տանել, վորին ամբողջ ազգաբնակչությունը պետք է լիակատար աջակցություն ցույց տա:

1) Պարզել, թե վոր ներհասցերն ու նկուղները կարելի յե հարմարեցնել զազապաստանների համար. քանի մարդ կարելի յե նրանց մեջ տեղավորել, և, յեթե հարկավոր է, նոր գաղապաստաններ կառուցել: Սահմանել, թե ով և վոր գաղապաստանով իրավունք ունի ոգտվել քիմհարձակման ըոպելին:

2) Սահմանել այն տեղերը, վորտեղ, ողաքիմիական հարձակման դեպքում, պիտի հասցվի առաջին ոգնությունը վիրավորներին և գաղով թունավորվածներին:

3) Շենքեր գատել պահեստի հակազազերի, պաշտպանական հագուստի և ապագազացման միջոցների տեղավորման համար:

4) Նշել ողբալին հակառակորդի դիտողութիւնն պոստեր և կապի կարգը հարեան շրջանների հետ, նույնպես և ամբողջ տեղամասի ողբաքիմիական պաշտպանութիւնն պետի հետ:

5) Նշել քիմիական դիտողութիւնն պոստեր, վորտեղից հնարավոր լինի դիտել ուղմբերի անկումը և նրանց պայթման ժամանակ վորոշել, թե արդյոք նրանք քիմիական են, թե վոչ, վորի մասին պետք է անհեկակացնել շրջապատող շրջանները:

6) Սահմանել և հաղորդել բնակչութիւնը հակառակորդի մտեցման մասին հայտնող ազդանշաններ տալու կարգը: Սովորաբար տվյալ նպատակների համար ոգտագործվում են զանգերը (յեկեղեցական, հրդեհաշէջ խմբերի), գործարանների շչակները և այլն: Առաջին հենց ազդանշանով տվյալ շրջանի ամբողջ բնակչութիւնը պետք է ձեռք առնի հակազազալին պաշտպանութիւնն անհրաժեշտ և նախազգուշական միջոցները: Յեթե հարձակումը գիշերն է կատարվում, հրապարակնորի և փողոցների լապտերները հանգցվում են, լուսավորած պատուհանների վրայի վարագույրներն իջեցվում են, հանգցվում են նույնպես փողոցների խարույկները և այլն: Յուրաքանչյուրը պետք է հակազազն իր մոտ ունենա «պատրաստ» գրութիւնը: Ով հակազազ չունի, գնում է զազապատանը. զազապատանների դռները, պատուհանները, ողանցքները պետք է փակել, վարագույրներն իջեցնել և դռների մոտ զազապատանի ողբապահ դնել: Շարժումը փողոցներում կամ բոլորովին դադարեցվում է, կամ սայլերն ու վտտով գնացողները շարժվում են առանձին առանձին:

Յեթե հակառակորդի սովառնակները մի այլ ուղղութիւնն են վերցրել, լերկորոզ ազդանշան է տրվում, (որինակ, մանր զանգակների հաճախակի հարվածներ), վորը հայտնում է, վոր վտանգն անցել է: Իսկ յեթե հակառակորդը, այս կամ այն շրջանի վրայով թռչելիս, ուղմբեր է ցած ձգում, այդ դեպքում նրանց ազայթման ձայնը ծառայում է իրրև ազդանշան, վոր հակազազերը պետք է հագնել, տների պատուհաններն ու դռները փակել, և վոր զազապատանից դուրս գալը չի թալատրվում: Սովորաբար քիմիական հարձակման սկիզբը հայտարարվում է հատուկ ազդանշաններով: Յեթե քիմիական դիտողութիւնն պոստերը վորոշել են, վոր վայր ձգած ուղմբերը քիմիական չեն, այդ դեպքում քիմիական տագնապի հատուկ ազդանշան չի տրվում: Իսկ յեթե ուղմբերը քիմիական լինեն, հատուկ (տեղական) ազդանշան է տրվում և ուղմբի տայթման տեղը խմբեր են ուղարկվում տպագազացման համար. միայն թ. Ն.-ից մաքրելուց հետո բնակչութիւնը հայտարարում են ողբաքիմիական հարձակման վերջանալու մասին:

Անցյալ պատերազմների փորձի վրա հիմնվելով, կարելի է առաջուց գուշակել, վոր յեթե նախազգուշական և հակաքիմիական բոլոր միջոցները ժամանակին ձեռք առնենք, նույնպես և կարգապահութիւնն բոլոր պահանջները ճշտութիւնով կատարենք, այն ժամանակ ողբալին հակառակորդի հարձակումների հասցրած վնասը շատ աննշան կլինի:

**ՔՆՈՍՈՒՑԱԿ**

- Ալկալի, ալկալիին ջուր щелочная вода  
Ալկալիին հատիկներ щелочные гранулы, зерна  
Ածխածխաթթու углекислота  
Ակտիվացրած ածուխ активированный уголь  
Անհատական պաշտպանութ. индивидуальная защита  
Անջրանցիկ непрокаемый  
Ապագազացում дегазация  
Ապաստան, ապաստարան убежище  
Ավուկ пряжка  
Ավիաքիմ ջոկատ авиахимотряд  
Արկ снаряд  
Արտաշնչման կախույր выдыхательный клапан  
Արտաավարեր Թ. Ն. слезоточивые О. В.  
Արցունքաժորանք слезоточение  
Գազագլանային գրոհ газобаллонная атака  
Գազապաստան газоубежище  
Գազից անթափանց газонепроницаемый  
Գազորոշիչ газоопределитель  
Գալար спираль  
Գալարուն զսպանակ спиральная пружина  
Գիհի можжевельник  
Գործունակ ածուխ активированный уголь  
Դիմակ маска

Իմակ-կորդակ маска-шлем

Ինչակալ намордник

Թ. Ն. (Թունավորող նյութեր) Օ. В. (отравляющие вещества)

Թորաման реторта

Թրկել обжигать

Իպրիտ иприт

Լյուիզիտ льюизит

Խարապարկ торба

Խեղդիչ Թ. Ն. удушающие О. В.

Խուց камера

Ծալքավոր խողովակ гофрированная трубка

Ծակոտկենություն пористость

Կաղապար выкройка

Կայուն Թ. Ն. стойкие О. В.

Կափարիչ крышка

Կափույր клапан

Կենտրոնացում գազի концентрация газа

Կիզիչ սոդա едкая, каустическая сода

Կիսադիմակ полумаска

Կլանիչ поглотитель

Կոլեկտիվ պաշտպանություն коллективная защита

Կորդակ шлем

Կրակուծույթ известковый раствор

Հակադադ противогаз

Հակադադային լուծույթ противогазовый раствор

» արկի противогазовая коробка

Հակաքիմիական պաշտպանություն противохимическая оборона

Հատիչ зубило

Հեղձանք удушье

Հերմետիկ герметический

Հերմետիկացում герметизация

Հերմետիկություն герметичность

Հովահարում проветривание

Ձիթադեղ олифа

Ճակատամերձ շերտ прифронтная полоса

Մարգանածեղ կալիում марганцево-кислый кали

Մարտական թունավորող նյութեր боевые отравляющие вещества

Մարտական հակադադ боевой противогаз

Միացնող նախափողակ соединительный патрубок

Ներշնչման կափույր вдыхательный клапан

Ոդային հարձակում воздушное нападение

Ոդանցք отдушина

Ոդառումը аэробомба

Ոդա-քիմիական պաշտպանություն воздушно-химическая оборона

Ուրոտրոպին уротропин

Փախրակային գազ нарывной газ

» ներգործություն нарывное действие

Պայթուցիկ նյութեր взрывчатые вещества

Պաշտպանութունն оборона, защита

Պլինթ плинтус

Սակավահայուն թ. ն. малостойкие, нестойкие О. В.  
Սողնակ задвижка

Վերերկրյա միջոցներ наземные средства  
Վոդորենի береза

Տալկ тальк

Փողակ трубка

Քիմիական հարձակում химическое нападение

Քլոր хлор

Քլորակիր хлорная известь

Քլորպիրին хлорпикрин

Քսերոֆորմ ксероформ

Փոսգեն фосген

Ց Ա Ն Կ

	52
Ամենքը պետք է կարողանան իրենք պահպել թ. ն.-ից	3
I. թ. ն.-ից անհասական պաշտպանության միջոցները	5
Ժամանակակից հակազգրի կազմութունը	9
Ինչպես պատրաստել հակազգրը	15
ա) Հակազգրային տուփ պատրաստելը	15
բ) թ. ն. կլանիչներ պատրաստելը	18
գ) Տուփը լցնելը	21
դ) Հակազգրի կորզակ-զիմակի և այլ մանրամասնութ. կառուցումը	23
Հակազգրերով ոգտվելու կանոնները	28
Հակազգրերը պահելու և խնամելու կանոնները	30
II. թ. ն.-ից կոլեկտիվ պաշտպանության միջոցները	
Շենքերի հարմարեցումը գազապաստանների համար	31
ա) Գազապաստանների հովհարումը	36
բ) Գազապաստանների ստորգումը	37
Գազապաստաններով ոգտվելու կանոնները	37
Վարակված վալրի թ. ն.-ից մաքրելու (ապազգազման) կանոնները	40
III. Առաջին ոգնությունը թ. ն.-ից վնասվածներին	46

IV. Ք. Ն.-ի ներգործությունը հենդանիների վրա յեվ նրանց պատկանության միջոցները	48
V. Սնունդի Վերհաններ, կահույքի յեվ ճնային սիսույնների այլ առարկաների պատկան- ությունը Ք. Ն.-ից	51
VI. Հակահիմնական պատկանության կազմա- կերպության կարգը տեղերում	54
Բառացուցակ	59



« Ազգային գրադարան



NL0272716

44768 20 44768 (2 4)

13279



К. А. Жданов

Простейшие средства  
противо-химической обороны

Госиздат ССР Армении

Э р и в а н ь